ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 365-Ա

« 13 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ՓԱՆԴՈՒՆՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 48-րդ կետի 19-րդ և 22-րդ ենթակետերը, 49-րդ կետը, մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անդամների կողմից 2024 թվականի հոկտեմբերի 23-ին «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ կատարված աշխատանքային այցի մասին զեկուցագիրը և հաշվի առնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 01/15/6905-2024 գրությանն ի պատասխան տրված ժամկետում «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Փանդունցի ներկայացրած գրավոր բացատրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ, 139-րդ, 142-րդ, 164-րդ հոդվածների պահանջները չպահպանելու, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն չիրականացնելու, կրթական ծրագրերը պատշաճ ձևով չիրականացնելու, կրթական գործընթացը ճիշտ չկազմակերպելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Փանդունցին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա. Փանդունցին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր